

Semiotics and Language Teaching. Theoretical Principles and Practical Applications. Selected Papers Presented at the II Conference on Semiotics and Language Teaching Held at Yerevan State University 20-22 May 1996, Edited by Dora Sakayan (McGill University), Caravan Books, Ann Arbor, 2001, 244 pp.: Գիտական հոդվածների սույն ժողովածուն, որն ունի «Նշանագիտություն և լեզուների ուսուցում» ընդհանուր խորագիրը, ներկայացնում է 1996 թ. մայիսի 20-22-ին Երևանի պետական համալսարանում կայացած 2-րդ գիտաժողովի նյութերը՝ որոշ ընտրությամբ: Գիտաժողովը տեղի էր ունեցել համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գերմաներենի ամբիոնի նախկին վարիչ, դոցենտ Ա. Տոնոյանի (այժմ՝ հանգուցյալ) և Կանադայի ՄակԳիլի համալսարանի պրոֆ. Դ. Սաքայանի անմիջական կազմակերպումով և ուներ տեսական և գործնական հարցերի լայն շրջանակ:

Նշենք, որ 1995 թ. Կանադայում տեղի է ունեցել հայերենագիտական 5-րդ գիտաժողովը (որի նյութերը և տպագրված են «Proceedings of the Fifth International Conference on Armenian Linguistics, McGill University, Montreal, Quebec, Canada, May, 1-5, 1995», edited by Dora

Sakayan, Caravan Books, Delmar, New York, 1996, 408 pp.), որի գիտական կազմակերպիչը դարձյալ պրոֆ. Դ. Սաքայանն է եղել:

Նման գիտաժողովների կազմակերպումը, բնականաբար, խթան է հանդիսանում ոչ միայն լեզվաբանական գիտելիքների զարգացման, այլև լեզվաբանական դպրոցների և հաստատությունների մասնագետների շփման ու փորձի փոխանակման համար:

«Նշանագրություն և լեզուների ուսուցում» ժողովածուն բաղկացած է յոթ բաժնից, նյութերը դասավորված են ըստ գիտաժողովի զեկուցումների բաժանմունքների. Գիտական հոդվածների հեղինակները ներկայացնում են 33 ԳՍԱ 3. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը, Կանադայի ՄակԳիլի համալսարանը, Երևանի 4. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը և այլն:

Ժողովածուն բացվում է 33 ԳՍԱ ակադ. Է. Աթայանի առաջաբանով, որում ներկայացվում է ոչ միայն հիշյալ գիտաժողովի կարևորությունը, այլև բարձր գնահատության արժանանում պրոֆ. Դ. Սաքայանի գիտակազմակերպական գործունեությունը:

Լիազույնար Միստին կարդացված զեկուցումները, իբրև գիտական հոդվածներ, գետեղված են ժողովածուի առաջին բաժնում: Դրանք նվիրված են եղել արտալեզ-

վական և լեզվական աշխարհի նշանային պատկերացումների մեկնաբանությանը (Է. Աթայան), գրական հայերենի ը ծայրավորի արժեքավորմանը (Գ. Բարսեղյան), հնդեվրոպական պայթական բաղաժայնմների ոչ լիարժեք արտացոլմանը հայերենում (Վ. Համբարժումյան), հնդեվրոպական *rs-ի արտացոլմանը հայերենում (Գ. Ջահուկյան) և օտար լեզվի դասականիման մեջ նոր մոտեցմանը (Դ. Սաքայան):

Գիտաժողովի տարբեր բաժանմունքներում կարդացած զեկուցումները սույն ժողովածուի մեջ զետեղվում են առանձին խորագրերի տակ՝ նկատի առնելով քննարկվող հարցերի թեմատիկ մերձավորությունը: Այսպես կարդալով այդ հոդվածները՝ որոշակի պատկերացում ենք ունենում, թե վերջին ժամանակներս հայ լեզվաբանության և լեզուների ուսուցման բնագավառներում ինչպիսի աշխատանքներ են ծավալված, և ինչքան են դրանք նպաստում գիտության տվյալ ոլորտի զարգացմանը:

Նշանագիտություն և պրագմատիկ լեզվաբանություն բաժնում քննության են առնված ընդհանուր տեսական հարցեր (Ա. Աբրահամյան, Լ. Բրուտյան, Ծ. Պարոնյան և Ի. Ստրելցովա):

Հայերենագիտություն բաժնում զետեղված աշխատանքները վերաբերում են հայերենի հնչյունական համակարգի տառադարձությանը (Մ. Սղաբեկյան), մովսես խորենացու երկի մեքենական տվյալների զրանցմանը (Ռ. Ուռուտյան և Ա. Մանուկյան), արդի հայերենի հարաճունների (Ռ. Շալունց), ինչպես նաև հայե-

րենի փախառությունների (Ա. Բեգլարյան) ուսումնասիրմանը:

Ձգալի թվով աշխատանքներ նվիրված են եղել տիպաբանական-զուգադրական, նաև թարգմանությանն առնչվող խնդիրների՝ զրված հայերենի և անգլերենի կամ ռուսերենի, հայերենի հին և նոր, ինչպես արևմտյան և արևելյան տարբերակների ընծեռած նյութի հիման վրա (Ա. Աբրահամյան, Կ. Կարապետյան, Ի. Մանուչարյան, Ն. Մելիքյան, Ռ. Տեր-Առաքելյան, Օ. Վարդապարյան):

Տեքստի լեզվաբանության բաժնում քննության առարկա են եղել շարույթը, շրջասույթը, տերմինի ուղղվածությունը և համատեքստը (Դ. Գյուլզադյան, Ռ. Գրծելյան, Ա. Տոնոյան և Է. Ղազարյան, Ե. Երզնկյան):

Ժողովածուի ուշագրավ բաժիններից մեկն օտար լեզուների ուսուցման հարցերի վերաբերյալ աշխատանքներին է նվիրված (Մ. Աստվածատրյան, Մ. Ավետիսյան, Գ. Հովհաննիսյան, Ս. Վարդանյան, Ա. Ջատիկյան):

Վերջին բաժինը կազմում են գրական երկի լեզվական և լեզվաբանական վերլուծությանն առնչվող աշխատանքները, որոնք վերաբերում են Մ. Բուլզակովի և Վ. Մայակովսկու կոնկրետ երկերի, ինչպես նաև հայկական էպոսի առանձին երևույթների (Ն. Խաչատրյան, Մ. Սարգսյան, Կ. Սկրտչյան):

Հոդվածների սույն ժողովածուն տպագրված է բավականին խնամքով, նվիրված է վաղամեղիկ զերմանագետ Ա. Տոնոյանի հիշատակին:

Վ. Խ. Փարսադանյան, Պարսկերեն - դարի - հայերեն և դարի - պարսկերեն - հայերեն բառարան, Երևան, Տիգրան Մեծ, 2002, 240 էջ:

Գրախոսվող սույն բառարանը մեզ առավելապես հետաքրքրում է ցեղակից երկու լեզուների և դրանց հետ ժյուլային ցեղակցություն ունեցող հայերենի բառապաշարի այն զուգահեռության տեսակետից, որն արդյունք է հիմնականում փոխառության, որոշ դեպքերում ծագումնալին զուգադիպության:

Ամենից առաջ նշենք, որ հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենը և իրանական լեզուները պարունակում են հնչյունական և քերականական կառուցվածքի որոշակի զուգադիպումներ, որոնք բացատրվում են ցեղակցության և ոչ թե փոխառություն լինելու հիմունքով: Պատճառն է մշակութային հանգամանքների բերումով հայերենը կատարել է զգալի թվով փոխառություններ իրանական լեզուներից, որոնք նույնիսկ գերազնահատվել են ժամանակին՝ հայրենի ցեղակցային դիրքը բնութագրելիս:

Արդի հայերենը և նոր պարսկերենը, աֆղաներենը (փուշտուն) և դարին ներկայումս դարձել են նաև կրթության լեզու՝ հատկապես բուհերի արևելագիտական բաժանմունքներում:

Եվ պատահական չէ, որ Երևանի Հրայրյա Անադյան համալսարանը, ի թիվս դրվատաճի արժանի կրթական և գիտական այլ ձեռնարկումների, հրատարակում է նաև ոչ միայն գիտական աշխատություններ, այլև դասագրքեր, ուսումնական բառարաններ, որոնք կարևոր են այդ ձեռնարկումների իրականացման տեսակետից: Այդպիսի մի հրապարակում է

հիշյալ երեքլեզվյան ուսումնական բառարանը, որն, ինչպես հեղինակն է վերնագրին կից գրում, «պարունակում է պարսկերենի և ժամանակակից դարիի բառային կազմում գոյություն ունեցող ավելի քան 3500 տարբերություններ»:

Բառարանը, ինչպես նկատելի է վերնագրից, բաղկացած է երկու մասից. առաջինը ներառում է պարսկերեն և դարի, իսկ երկրորդը՝ դարի և պարսկերեն զուգադիպումները, երկուսը միասին ի զուգադիպություն հայերենի:

Պարին այսօր պետական լեզվի կարգավիճակով հանդես եկող հաղորդակցման միջոց է, կազմում է իրանական լեզուների մի առանձին դրսևորումը և փուշտու լեզվի հետ միասին գործառնում է ներկայիս Աֆղանստանում: Այնպես, որ հնդեվրոպական լեզուների ուսումնասիրությանը նվիրված շատ քիչ աշխատություններում կարելի է հանդիպել նման մի լեզվի թվարկման, որ իր տեղը գտած լինի իրանական ժյուլի լեզուների մեջ:

Եվ բնական է, որ հայերենի և իրանական լեզուների առնչությունների մեջ կարող էր հետաքրքիր լինել այդ երկու լեզվի բննարկումը:

Սույն բառարանի առումով նկատելի են հետևյալ բնորոշիչ գծերը.

ա) Առանձին տեղ են զբաղեցնում նոր հասկացությունների նշանակմանը վերաբերող բառերն ու արտահայտությունները, որոնք ընդհանուր փոխառություններ են և մեծապես հանդիպում են ուրիշ շատ լեզուների բառապաշարի մեջ ևս:

բ) Առանձնապես ուշագրավ են բառային այն զուգադիպումները, որոնք այս կամ այն չափով պայմանավորված են հայերենի և իրանական լեզուների, վերջին դեպքում հատկապես պարսկերենի տևական շփումներով: Նշենք, որ մեզա-

նում բավականին լավ են ուսումնասիրված հայերենի իրանական փոխառությունները. նկատի ունենք հատկապես վերջին ժամանակների աշխատանքները (Յ. Աճառյան, Գ. Զահուկյան, Ա. Փերիխանյան, Լ. Հովհաննիսյան և ուրիշներ): Ի համեմատություն վերջինիս գիտական ուշադրությունից մի տեսակ դուրս է մնացել հայերենից իրանական լեզուներին անցած փոխառությունների հարցը:

զ) Համառոտ բառարանի տվյալների մի որոշ մասի թուլցիկ համեմատությունն անզամ ցույց է տալիս, որ հայերենի և դարի լեզվի միջև կարելի է առանձին ուսումնասիրություն ծավալել՝ պարզաբանելու հայերենի, հատկապես վերջինիս բարբառներին առավել բնորոշ մի շարք ձևերի հնչյունական, արմատական և ինչ-ինչ դրսևորումների առումով նկատելի անհստակությունը:

Բառարանի որոշ տվյալների մեր համեմատությունից ստանում ենք այն տպավորությունը, որ հայերենի բարբառներում առկա իրանական փոխառությունների մի մասը հնչյունական առումով ավելի մոտ է դարիի, քան պարսկերենի համապատասխան ձևերին:

Բերենք նման փաստերից մեկ-երկուսը:

Հայերենի միջին շրջանի բարբառային փոխառություններից այվան // էվան «պալատ» բառը հնչյունական արտացոլման տեսակետից համեմատելի է և պարսկերենի eyvān, և դարիի ayyān ձևերի հետ. իբրև արտասանական տարբերակներ՝ դրանք առաջացել են հայերենի՝ ներսում, թե՛ գալիս են իրանական լեզուներից:

Հայ. (բրբռ.) չափա «հող փորելու մի գործիք» բառը փոխառություն է իրանական լեզուներից, սակայն ավելի

չուտ պետք է կապել դարիի čapa // յաթ ձևի հետ, քան պարս. pāru, եթե բացառվի միջին շրջանի պարսկերենից փոխառություն լինելը:

Գրական հայերենում ունենք ապտակ բառը, որ մախկինում դիտվել է իբրև «ամհայտ ծագման» բառ (այժմ կարելի է ապացուցել, որ այն ունի հնդեվրոպական ծագում): Հայ. բարբառներում ունենք փոխառյալ երկու բառ չափալադ և սիլ(լ)ա, որոնցից առաջինն առնչվում է դարի լեզվի čapašaq, իսկ երկրորդը՝ պարս. sili ձևին: Նման փոխառությունների լեզվական, ժամանակային և տարածքային հատկանիշներին վերաբերող հարցերի պարզաբանումը մեծապես կարող է օգտակար լինել հայերենի պատմական բառագիտության համար:

դ) Պարզվում է, որ դարի լեզվի տվյալները նույնպես այս կամ այն չափով կարելի է շրջանառության մեջ դնել, երբ ձեռնամուխ ենք լինում հայերենի բնիկ շերտի ուսումնասիրությանը, երբ անհրաժեշտ է լինում համեմատություն անցկացնել ի թիվս ցեղակից մյուս լեզուների համապատասխան արտացոլումների հետ:

Գործնական նպատակ հետապնդող այս բառարանի տվյալները որոշ իմաստով հույս են ներշնչում, որ դարի լեզվի և հայերենի տարբեր կարգի ձևերի լայն քննության նպատակով կարելի է ավելի հիմնավոր աշխատանք ծավալել հատկապես համեմատական-ստուգաբանական չափանիշներով:

Վ. Փարսադանյանի սույն բառարանը արդյունք է երկար տարիների աշխատանքի, որը պետք է շարունակել ոչ միայն գործնական, այլև տեսական խնդիրների լուծմանը հետամուտ լինելու նպատակով:

Վ. Գ. Համբարձումյան